ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 88

«12» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 10 ՀԵԿՏԱՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ «ՖԱՐՏՈ-ՖԻՆ-ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «ՖԱՐՏՈ-ՖԻՆ-ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2019 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 06 գրությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **ո ր ո շ ո ւ մ** է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի /Մայիսյան բնակավայր/ սեփականությունը հանդիսացող 10 հեկտար արտադրական նշանակության հողատարածքը «ՖԱՐՏՈ-ՖԻՆ-ՍԿԱՆԴԻՆԱՎԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարելու համաձայնություն տալ:

2.Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին՝

1)Հողաշինարարական աշխատանքներ կատարելու լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց միջոցով կազմել հողամասի հատակագիծն ու նկարագրությունը:

2)Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի

կադաստրի Շիրակի մարզի ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	---------- v	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	---------- v	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	---------- v	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	---------- v	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	---------- v
ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝	---------- v	----------	----------
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	---------- v	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Մայիսյան